Արձանագրություն N 2
Բժիշկների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԲՄԽԾՁԲ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահող՝ Քրիստինե Գյուրջյան

Հանձնաժողովի անդամներ Արմինե Բոչոլյան, Դավիթ Հովսեփյան

Հանձնաժողովի քարտուղար Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ք. Գյուրջյան)

Ընդունել ի գիտություն, որ 09.12.2024թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի հունվար 8, ժամը 17:00-ն:

2025 թվականի հունվարի 8-ին ժամը 17:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	Ք. Երևան, Կոմիտաս 49/4, 010 23 71 34, 010 23 53 50 info@nih.am	00011624
2	««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ	Ք. Երևան, Կոմիտաս 49/4, 098 90 30 03, national.med.palace@gmail.com	00195965

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ք. Գյուրջյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

(Ք. Գյուրջյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի մասին 23.01.2025թ մասնակիցը ծանուցվել է հետևյալ բովանդակությամբ.

- ***««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ***

«ՀՀ ԱՆ ԲՄԽԾՁԲ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի

պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից անհամապատասխանությունները և ներկայացնել՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներից 3-րդ չափաբաժնի համար ներկայացված ՇՄՋ կրեդիտավորված դասընթացների ծրագրերի շրջանակներում «Քույրական գործը սպորտային բժշկության մեջ», «Քույրական գործը վնասվածքաբանությունում և օրթոպեդիայում» թեմաներով դասընթացների մասով անհրաժեշտ է ներկայացնել փոխարինող դասախոսի աշխատանքային փորձի և որակավերման վերաբերյալ տեղեկատվություն, «Էնդոկրին համակարգի հիվանդությունները բուժքրոջ աշխատանքում», «Քույրական գործը նեֆրոլոգիայում», «Իմունականխարգելման հիմունքները միջին բուժաշխատողների համար», «Քույրական գործն անեսթեզիոլոգիայում և ինտենսիվ թերապիայում» թեմաներով դասընթացների մասով անհրաժեշտ է ներկայացնել դասախոսի աշխատանքային փորձի ժամանակահատվածի հավաստումը

4-րդ չափաբաժնի համար ներկայացված ՇՄՋ կրեդիտավորված դասընթացների ծրագրերի շրջանակներում «Մանկաբարձական գործ», «Քույրական գործը վնասվածքաբանությունում և օրթոպեդիայում» թեմաներով դասընթացների մասով անհրաժեշտ է ներկայացնել փոխարինող/դասավանդող դասախոսի աշխատանքային փորձի և որակավերման վերաբերյալ տեղեկատվություն, «Էնդոկրին համակարգի հիվանդությունները բուժքրոջ աշխատանքում», «Քույրական գործը նեֆրոլոգիայում», «Իմունականխարգելման հիմունքները միջին բուժաշխատողների համար», «Քույրական գործն անեսթեզիոլոգիայում և ինտենսիվ թերապիայում» թեմաներով դասընթացների մասով անհրաժեշտ է ներկայացնել դասախոսի աշխատանքային փորձի ժամանակահատվածի հավաստումը:

Շտկված տարբերակը սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ armine.galustyan@moh.am, էլեկտրոնային հասցեին մինչև 24.01.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1702):

- ***ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ***

«ՀՀ ԱՆ ԲՄԽԾՁԲ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից անհամապատասխանությունները և ներկայացնել 1-ին և 2-րդ չափաբաժնների մասով ներկայացված դասընթացների ծրագրերը առանձնացված: Որակավորման չափանիշներից 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված ՇՄՋ կրեդիտավորված դասընթացների ծրագրերի շրջանակներում «Անեսթեզիոլոգիայի և ռեանիմատոլոգիայի արդի հարցեր», «Պոլիմերազային շղթայական ռեակցիայի և մոլեկուլյար-գենետիկ մեթոդներով լաբորատոր հետազոտությունների իրականացումը կլինիկական պրակտիկայում», «Վիրաբուժության ժամանակակից խնդիրները» թեմաներով դասընթացների մասով անհրաժեշտ է ներկայացնել դասախոսների աշխատանքային փորձի և որակավերման վերաբերյալ տեղեկատվություն «Հեմոդիալիզի տեխնիկան» թեմայով դասընթացի ծրագիրը չի ընդունվում, քանի որ ծրագրի թիրախային լսարանը բուժքույրերն են: Անհրաժեշտ է ներկայացնել արյունաբանների համար նախատեսված այլ ծրագիր և ծրագրի շրջանակներում դասավանդող դասախոսների աշխատանքային փորձի և որակավորման վերաբերյալ տեղեկատվություն:

Շտկված տարբերակը սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ armine.galustyan@moh.am, էլեկտրոնային հասցեին մինչև 24.01.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1702):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

23.01.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են շտկման փաստաթղթերը:

03.02.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ք. Գյուրջյան)

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

Հ/հ	գնման առարկայի անվանումը	գնման գինը / 1 ՇՄՀ կրեդիտի առավելագույն արժեքը	մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր
1	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների իրականացման ծառայություններ	38 940 000 /1 180	ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	983,33	196,67	1 180
2	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների իրականացման ծառայություններ	18 648 000 /1 480	ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ	1233,33	246,67	1 480
3	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների իրականացման ծառայություններ	20 940 000 /349	««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ	349		349
4	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների իրականացման ծառայություններ	12 574 800 /499	««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ	499		499

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ք. Գյուրջյան)

03.02.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընտրված մասնակիցներ ճանաչել.

✓ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 1,2 չափաբաժիններով,

✓ ««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ-ն 3,4 չափաբաժիններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ք. Գյուրջյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԲՄԽԾՁԲ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չի կիրառվում:

Պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին 1,2 չափաբաժիններով՝ 57 588 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով և ««Ազգային բժշկական պալատ» ՄՄ» ՀԿ-ն 3,4 չափաբաժիններով՝ 33 514 800 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ք. Գյուրջյան*

անդամներ՝ _____ *Ա. Բոչոյան*

_____ *Դ. Հովսեփյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*